

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 «ուղարկոյ համար»
 Տարեկան 10 ծր.
 Վեցամսայ 5 »
 Իրասանկանի հա-
 մար Տարեկան 12 »
 Վեցամսայ 6 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 2.50 ժր.
 Վեցամսայ 1.25 »
 ԿԱՆԻՏԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Իրանուցան սոյոյ առաջին
 րիկնիկ համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է. երեքին
 աւելի սակաւներու համար
 20 Օլօ գեղջ կըլլայ :

ՇՆԱՄԹԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԹԻ ԵՒ ՇՆԱՄԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեղ
 Խմբագրութեան հասցեիկն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Դրոսթիւնիս եւ չեկ սրուր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Ա. Զ. Դ.

Պուլկարական Գիմնազիոնի ու-
 սուցիչ մը, կուղէ պուլկարեանի
 մասնաւոր դասեր աւանդել նոյն-
 պէս և ուրիշ առարկաներ, գիտէ
 և ֆրանսերէն :

Հասցէ, «Շարժում» խմբագ-
 րատունը :

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ

Գրէթէ արտասահմանի ամ-
 բողջ հայ մամուլը մեղի հետ հա-
 մաձայն գտնուեցաւ և մրեւոյն
 խստութեամբ դատաւարտեց
 Օրմանեան էֆէնտին, և ասի
 բնական էր, քանի որ այնքան
 մեծ էր կատարուած դաւաճանու-
 թիւնը և եղած անարգանքը մեր
 ազգային արժանապատուութեան :

Այն տեղերը՝ ուր գիտակից և
 անկեղծ երիտասարդութիւնը ա-
 ւելի գործօն և աւելի ազդու էր,
 դադարեցուց չիք պատրիարքի
 անուան յիշատակութիւնը : մենք
 կը ոպասենք որ ողջ դատադու-
 թիւնը ամէն հայաբնակ կէտե-
 րու մէջ ալ տանի նոյն յաղթա-
 նակը :

Բայց ասով մեր բոլոր պարտա-
 կանութիւնը կատարած չենք ըլ-
 լար. և մեր գործունէութիւնը
 հոս պէտք չէ կանգ առնէ :

Օրմանեան՝ որուն մտտ զան-
 գուածին մէջ ցամքած են ազգա-
 սիրական երակները, և բթացած
 զգացող ջիղերը, ականջները
 խիստ անտարբեր և անզգայ կը
 ձեւանայ, և նոյնիսկ իր գէժ և-
 զած բողոքներէն մոլեգնած աւելի
 մեծ շարիքներ կը դարբնէ ազգին
 գէժ :

Եւ այս ըսածնիս սոսկական կառ-
 կած մը չէ :

Պօլսէն հասած նամակներէն,
 լուրերէն կը տեղեկանանք որ
 Պատրիարքարանի մէջ Սահմա-
 նագրութեան վերաքննութիւնը
 մեծ փութով առաջ կը տարուի,
 և ներկայ Վարչութիւնը այդ
 գործը գլուխ հանելէ յետոյ միայն
 պիտի հրատարի :

Վերաքննութիւնը որ կը կա-
 տարուի Սուլթանին հաւատարիմ

հպասակներուն ձեռքով, Սահ-
 մանագրութեան շնորհ մը չէ լոկ,
 աւելի գէշը անոր շարափոխու-
 թիւնն է :

Եթէ ներկայ չիք Պատրիարքը
 և Վարչութիւնը յաջողին այդ
 շարափոխուած օրէնքը վաւերա-
 ցընել և կըլլեցնել ազգին, ալ
 պէտք է մոռնանք մեր ազատ
 ընտրութիւնները : Աչք մը,
 Չամիչ մը և Օրման մը և ասոնց
 նման թրքամուլ և ազգատեաց
 մարդիկ պիտի գան փոխն ի փոխը
 բազմիլ պատրիարքական գահին
 վրայ, և առաջնորդել թուրքիոյ
 հայութիւնը, և այսպէս մեր ինք-
 նազարդացումի, ազատագրու-
 թեան գործը պիտի յետաձգուի,
 աւելի կիճոտի ու դժուարա-
 նայ :

Երբ մէկ կողմէն կը կռուինք
 ու կաշխատինք նոր իրաւունք-
 ներ, առաւելութիւններ ձեռք
 բերելու, թող տարու չենք որ
 ունեցածնիս յափշտակեն :

Ինչպէս ըսած ենք ուրիշ ան-
 գամ, ներկայիս մէջ մեր թուր-
 քիաբնակ հայերէն շատ բան չենք
 կաշու պատել, անոնք սովին ու
 սուրին սարսափովը սահմուկած
 առ այժմ բան մը ընելու անկա-
 բող են, և եթէ բողոքողներ ալ
 գտնուին, անոնց ձայնը չուտով
 կը խեղդուի բանտի մը և կամ
 վանքի մը պատերուն մէջ :

Մենք, արտասահմանի հայերս
 պէտք է միջոցներ խորհինք գա-
 լիք այս խոշոր շարիքին առաջն
 առնելու :

Բնաւ միտքերնուս անգամ
 չանցունենք որ ի ֆրաս մեղի չա-
 րափոխուած օրէնքի մը համար
 եւրոպական կրանիթէ դիւանա-
 գիտութիւնը մեղի թեր կելլայ :
 անոնք որ մեր արիւնոտ օրերուն
 մէջ անտարբեր մնացին, և թող
 սուին որ հայը զոհ դառնայ
 թուրքին կամայականութեանցը,
 օրէնքի մը փոփոխութեանը հա-
 մար երբեք չի պիտի երեքան :

Մեր յեղափոխական կուսակ-
 ցութիւններու վրայ ալ չենք
 կրնար բարգել բոլոր աշխատու-
 թիւնը, և ամէն բան անկէ սպա-
 սել, քանի որ մեզմէ ահագին
 մաս մը իբր աւելի դիւանագէտ

և կամ խաղաղ միջոցներու հե-
 տամուտ հեռու կը մնայ անոնցմէ :
 Մենք ալ առնենք մեր գործե-
 լու բաժինը :

Առաջին քայլը առինք Պատ-
 րիարքին անունը յիշատակել չի
 տալով, արգելք մը չի կայ որ չի
 շարունակենք մեր ճամբան :

Բողոքող հանրագրութիւններ
 պատրաստենք և զրկենք Օրման-
 եանի. և պահանջենք որ հրա-
 ժարի աթոռէն :

Իոյնիսկ կրնանք դիմել ուղ-
 զակի Վեհ. Կաթողիկոսին, և
 ցնցել զանի որպէս զի իր ունե-
 ցած միջոցները գործադրէ Օր-
 մանեանը գահէն իջեցնելու և
 կամ ուղղութեան բերելու :

Չի կարծենք թէ մեր այս բո-
 ղոքները, հեռուէն արձակուած
 ըլլալուն համար ու է ազգեցու-
 թիւն չեն ըներ և ապարդիւն կը
 մնան. ընդհակառակն, երբ ու-
 ժով ըլլան անոնք, ահագին նշա-
 նակութիւն կունենան և բարոյա-
 պէս կը ճնշեն Օրմանեանը, և կը
 ստիպեն որպէս զի վերջ մը գնէ
 իր դաւաճան գործունէութեանը :

Դաւադիրները մեծ փութով
 կաշխատին, պէտք է մենք կան-
 խենք զանոնք, մեր գանդաղկո-
 տութիւնը ու անհոգութիւնը կըր-
 նայ մեր սկսած ազուր գործը
 փճացնել. և ահագին դժուարու-
 թիւններ հանել մեր առջեւ, և
 ոչ մէկ վարկեան ունինք կորսն-
 ցընելու :

Շարունակենք, աւելի ուժով :
 ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ, 20 Մայիս
 Սիրելի ինձմիս :

Մեր և ձեր տան դէպքերի հա-
 մար ըսելիքներս լմնցաւ, հիմա
 կարճ խօսքով իմացունեմ կառա-
 վարութեան ձեռքով մեր զլխուն
 եկածները :

Մեր քաղաքին կառավարու-
 թիւնը վաղուց լուծ էր թէ Սերոբ
 «փաշան» օր մը պիտի պաշարէ
 Մուշը : Եւ սկսաւ հազարէն աւել
 զօրք և 6—7 հազար համիտա-
 կաններ խումբ խումբ զրկել մեր
 գեղեր Սերոբ «փաշան» բռնելու

համար : Կառավարութեան միաքն-
 էր նախ գեղերը տկարացունել,
 և ապա քաղաքին հայերուն վրայ
 կարենալ իր ուղածը գործա-
 դրել :

Քաղաքիս թիւրք մեծերէն
 Թալէպ էֆէնտին, ստիկանա-
 պետը և երկու դորապետ 300
 զօրքով պաշարեցին Յրօնք գեղը
 և զօռ տուեցին գիւղացուց վրայ
 որ Սերոբ փաշան ցուցնեն իրենց :
 Գիւղացիք շատ և շատ քաջու-
 թեամբ պատասխանեցին թէ ի-
 րենք Սերոբ փաշայի տեղը (Աղ-
 բիւր) չեն գիտեր և չեն կրնար
 բռնել : Ատոք վրայ թիւրքերը
 կը կատարին կը թալնեն Յրօնք
 գեղը և կանցնին Խարբեղ Սարը
 Սերոբը բռնելու համար :

Հոն Սերոբը իր կտրիճ ընկեր-
 ներով դէմերին կելնէ և կա-
 սաղի կուր կսկսին. կսպանուի
 Թալէպ էֆէնտին 2 զօրապետ և
 25 զօրք, մնացածները կը փախ-
 չին Մուշ : Մեր կտրիճներուն ոչ
 մէկուն քիթն անգամ չկտրեցաւ :
 Այն գիշեր մեր կտրիճներ կը
 թողուն Տարոնոյ մեր հին պա-
 պենական լեռնադաշտ. և կանց-
 նին Տերի կատարի զազաթները :
 Ատոք վրայ թիւրքերը կատալե-
 ցան, (ոչ քաղաքին թիւրքերը)
 այլ կառավարութիւնը :

Երկու հազարէն աւելի զօրք և
 համիտիէի քիւրա զրկեց գիւ-
 ղերը : Եկան պաշարեցին Գէրգէ-
 վանք. Արախ, Բերդակ. Արվա-
 տենչ, Շմլակ և Մառնիկ գիւղե-
 րը : Յորեկատեի սպաննեցին Ար-
 վատէնչի բէիս Վահանը և Շմլակ
 գիւղի Տէր Մելքոն քահանան :
 Իսկ Սերոբ «փաշային» չը կրցան
 բան մը ընել : Ետքը անցան
 Բռնաչէն ու մտան Ս. Աղբերակի
 վանքը, սպաննեցին Ղապար վար-
 դապետը, թալնեցին Յօշուտ գեղ
 և սպաննեցին բէսը և ուրիշ հինգ
 մարդ ալ : Վերջը դատարկ ձեռ-
 քով վերադարձան և զօռ դրին
 առաջնորդ Վարդան վարդապե-
 տին վրայ ըսելով թէ այն ինչ
 գիշեր յեղափոխականները վան-
 քապատական գեղերն եղած են :
 Երկու երեք գանակ զարկեցին
 վարդապետին, հիմայ ծանր հի-
 ւանդ է :

Չենք գիտեր թէ Սուլթան Համիտին արիւնոտ սուրբ մինչեւ երբ պիտի փլիվայ մեր գլխուն . ձեր սուք կը պահենք իմացուցէք ընկերութիւններուն և այդ կողմի հարուստ հայերուն որ օգնութեան հասնին . Չենք , զենք . զենք պէտք է :

Փ. Պոլիս , 28 Յունիս

Բաւական երկար աստիճան ի վեր քաղաքէս տեղեկութիւններ չի հաղորդեցի ձեզի . պատճառը ծուլութիւնս չէր , ոչ ալ գէպքերու ամուլութիւնը , որոնք շատ առատ էին թղթակցութիւն մը կազմելու համար : Պարագանքը լուռ մնալ կը պահանջէին մինչեւ թաղականութեան ընտրութիւնը որ երէկ կատարուեցաւ առանց անախորժ միջադէպի մը :

Լուրթեանս այս միջոցին մէջ սակայն բաւական նորութիւններ տեղի ունեցան : Ընտրողական ժողովը , շատ դժուարութիւններէ ետք , վերջապէս կազմուեցաւ : Իր ամենէն կնճոռ գործը եղաւ որոշել թէ գաղթականները իրաւունք կրնան ունենալ քուէարկութեան մասնակցելու : Հայր Սուրբը Սահմանադրական հրահանգին վրայ յենելով պնդեց թէ «եկեղեցւոյ մը սեփական ժողովուրդը» իրաւունք ունի մասնակցելու նոյն եկեղեցւոյն ընտրութեան , իսկ «սեփական ժողովուրդ» ըսելով կը հասկնար «ընտանիքով» քաղաքի մը մէջ հաստատուած անձերու ամբողջութիւնը : «Սեփական ժողովուրդի» այս կերպ մեկնութեան դէմ բողոքեցին ընտրողական ժողովի մեծագոյն մասը և անոնք որ թէեւ ամուրի , բայց 10—15 տարիներէ ի վեր փրկուեց հաստատուած էին իրենց գործին բերմունքով , և որոնք իրենց ազգային պարտականութիւնները կատարելու ըստ կարելոյն աշխատած ըլլալով հանդերձ , հիմա կը զրկուէին ձայն մը ունենալու իրաւունքէն : Խնդիրը հաղորդուեցաւ Պատրիարքարանին և վերջապէս որոշուեցաւ որ երկու տարիէ ի վեր քաղաքս հաստատուած ամէն հայ անհատ իրաւունք ունենայ քուէարկութեան մասնակցելու :

Այս շրջանին մէջ էր նաեւ որ , քաղաքս ունեցաւ տեսակ մը կազմակերպութիւն «Յառաջդիմական խումբ» անունով , որուն նպատակն է միշտ հսկել ազգային գործերու կանոնաւոր ընթացքին վրայ ու աշակցել այն ամէն օրինաւոր մարմիններուն որոնք տեղական ազգային շահերու պաշտպանութեան և վարժարաններու բարելաւութեան խղճի մտք պիտի աշխատին : Այլ թաղ . Խորհուրդ կամ Հոգաբարձու կրնան վստահ ըլլալ որ առանձին չեն իրենց գործին մէջ , այլ միշտ պատրաստ ուժ մը ունին իրենց ետին , որ առաջին առթիւ յօժար է իր ձեռքը երկնցնել ամէն անկեղծ շնքերու հանդէպ :

Նախապատրաստութիւններ կը տեսնուէին երկու կողմէ ընտրութեանց առթիւ , թէեւ արդիւնքը կրնար այժմէն յայտնի ըլլալ արդէն , քանի որ յառաջդիմական խումբը մեծամասնութիւն ունէր ընտրողական ցանկին մէջ : Եւ սակայն հանգամանքները բարդ էին ու զուտ միակողմանի ընտրութիւն մը անկատար պիտի յաւերժացնէր այն երկպառակութիւնները , որոնք այնքան դուռն կերպով պայծեցան անցեալին մէջ և այնքան ձախողութեանց պատճառ դարձան : Այս կանխատեսութեամբ էր անշուշտ , որ , ընտրողական ժողովը , ընտրութեան օրէն մէկ քանի օր առաջ պաշտօնապէս իր

մօտ կանչելով երկու կուսակցութեան ներկայացուցիչները , համերաշխութեան մը յանգիլ առաջարկեց : Որքան ալ դառն ըլլար այդ տեսակ առաջարկ մը այնքան եպերելի անցեալով մը իրարմէ անջրպետուած կուսակցութեան համար , սակայն վերջին զոհողութիւն մը ընել հարկ եղաւ . քանի որ ազգային շահերը այդ կը պահանջէին , և նոյն ժողովին մէջ իսկ , երկու հակառակորդ կուսակցութիւններու ներկայութեամբ ու հաւանութեամբ , խմբագրուեցաւ եօթը անձերէ բաղկացած ընտրելիներու ցանկ մը : Հասարակութիւնը՝ ամբողջին յատուկ միակողմանի դատողութեամբ , միշտ յամառ իր որոշումին մէջ , չէր ուղեր ու է կերպով համակերպել համերաշխութեան սկզբունքին , կրցաւ ըմբռնել վերջապէս թէ ինչ ճշմարտութիւն մէջ կը գտնուէին ընտրելիներու ցանկը , որով հետեւեալ եօթը անձերը բացարձակ մեծամասնութեամբ թաղական ընտրուեցան :

Քուէ

Տ. Խաչիկ	Կախիով	161
« Պետրոս	Ստարոճեան	159
« Գրիգոր	Թամիրեանց	157
« Յովհաննէս	Արամեան	154
« Յովհաննէս	Գանթարեան	149
« Առաքել	Գաղաղան	145
« Օննիկ	Գարակէօզեան	144

Այսպէսով կը յոսանք փակել յուշումներու , վէճերու և զժողովութեանց այն աղետալի շրջանը որ մօտ երեք տարիէ ի վեր աշխարհեց փրկուեց : Արդի թաղ . Խորհուրդը , ամբողջապէս լուրջ , կարող անձերէ բաղկացած , բոլոր հասարակութիւնը կը ներկայացնէ իր մէջ . անիկայ պէտք է աշխատի ուրեմն զոհացում սալանոր ամբողջ արդար փափաքներուն , ազատել վարժարանը մա-

նաւանդ իր հին պատուելիական ուղղութենէն , որկէ երկար տարիներ ընթանալով ամբողջ սերունդի մը վճարման պատճառ եղած է . ժամանակի պահանջներուն համապատասխանող ուղղութիւն մը կը պահանջենք վարժարանէն , այնքան գործնական որքան զուտ ազգային . ու հոն յաճախող աշակերտները թո՛ղ զգան ուսման ճաշակը , զարգանան իրենց մտուոր ու բարոյական կարողութիւններուն մէջ , և թո՛ղ միանգամայն վառուին այն զգացումներով որոնք զիրենք կը կապեն իրենց պատկանած հասարակութեան հետ և կորոշեն իրենց ուղին . իբր սղագային անհատ , գործելու համար հայութեան դժնդակ ճանապարհին վրայ :

Եւ այն ոտեն արդի թաղ . Խորհուրդը թե՛ զստահ ըլլալ թէ ոչ մէկ վայրահաշտութիւն , ոչ մէկ պոռտախօս քննադատութիւն կրնայ նսեմացնել գործունէութեան արմէքը անոնք՝ որոնք համբերատար ու տոկուն աշխատեամբ , հետեւելով իրենց խղճի ձայնին , յուր մեծութեան մէջ կը շնորհակատարել իրենց լաւագոյն պարտականութիւնը :

Քուէ

Քուէ

Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ
Քուէ	Քուէ	Քուէ

Անհկարագիւր տեսչի մը , և մէկ երկու դարձեալ «անհկարագիւր» ու «հով գլուխ» ուսուցիչներու պաշտօնավարութեամբը այս շրջանն ալ լրացաւ : Տղաք բարքով ու նկարագրով անհամեմատ յառաջադիմութիւններ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԶՈՅԵՐ

Ասկէ տարի ու կէս առաջ Բուսչուքի մէջ 200 էն աւելի մարդիկ չարաչար զոհ գացին աղետի մը , որ պարզապէս հարուստ գործատէրի մը անխիղճ ազանութիւնէն յառաջ եկած էր :

Այդ ատենները , աղետին զօրաւոր եւ յուզիչ սպաւորութեանը տակ , տեղիս ընկերակալները՝ միացած ազատամիտ և զգալուն մարդերու հետ՝ Սանթրալի մէջ մեծ գումարում մը ըրին , ուր պուրկարներու հետ խօսեցաւ նաեւ այս առիւրը գրող հայը , որ իր ճշմարիտ մեղքութեանը մէջ զրամասերներու կրած սեւ հոգին և այդ սեւ հոգով անոնց աղքատ զստակարգին վրայ շահախնդրական ամէն կարգի անխղճութիւններ ի գործ դնելու համար օրէնքէն վայելած կործանարար առանձնաշնորհութիւններ ունկըն-

դիր հասարակութեան ցոյց տալէ յետոյ , ըսած էր նաեւ հետեւեալ խօսքերը . «Դ՛ո՛ք , պարոններ , որ այսօր զէպքին զեռ թարմ սպասորութեան տակ հոս հատաքուած էք ձեր զայրոյթը յայտնելու , հաւաքական և հրապարակային բողոք մը ընելու համար այն արիւնալի անխղճութեան դէմ զոր գործած է զրամասէր գործատէր մը , կատալութեան անգոնորոյ թուշտուութեամբ՝ եթէ այս սեղէն մեկնելէ վերջ պիտի մոռնանք ամէն բան , վայ՛ ձեզի և մե՛զք մեզի , որ հոս կը պոռանք . իսկ՛ եթէ սակէ զուրս հինելէ յետոյ պիտի խորհիք վերջ մը գնելու այսօրինակ ախուր իրողութիւններու , ահա այն ատեն է որ այդ գումարումը իր նշանակութիւնը ունի» :

Այն ժամանակ , երբ գործը զեռ տաք էր և ժողովուրդը յուզուած՝ կատալութիւնը ազգասիրտներն աչքերը ներկող քանի մը բաներ ըրաւ . բայց ժամանակէ մը վերջը ամէն բան մոռցուեցաւ , իբրբը իրենց նախկին վիճակն ստացան , և նոյն իսկ այդ աղետին պատաս-

խանատուները թեթեւ պատիժով մը օձիքնին ազատեցին , հակառակ խրատի բողոքող անուանի փաստարաններու երամի մը , և հակառակ ընդհանուր դատախազին՝ որ կուղէր ծանր կերպով պատժել սայ զանոնք (պատասխանատուները) :

Այդ օրերէն ստղին քիչ չէին այն զէպքերը որ պատահեցան միեւնոյն պատճառով , բայց երբ մենք տեսանք 200 զոհը՝ ալ այդ տեսակ մանր մուր բաները ի՞նչ նշանակութիւն կրնային ունենալ . և սակայն ես նշանակութիւն պիտի տամ նոր զէպքի մը . որ նոյնիսկ երէկ պատահեցաւ :

Ահա զէպքը . Տեղէս զէպի Սօֆիա շինուելու վրայ եղող երկաթուղին նիւթերը փոխադրելու համար սուժամանակեայ գիծ մը ձգուած է գէպի Գանուրի մէկ եկեղքը , ուրտեղ իշկպներէն (բոնակիր նաւ) առնելով գործաւորներ նիւթերը կը լեցընեն կառքերուն մէջ և վայրաջարթ մը գտնոնք անոնքով կը փոխարէ հարկ եղած վայրը . երկկ կատարներ լեցուն վիճակի մէջ՝ յանկարծ իսխաւելով իրենց տեղերէն՝ զէպի Գանուր զլրբելու վիճակը կը

ստանան . գործին տիրոջ կողմէն հոն գրուած հրամայողները՝ (զօմանտաճի) մինչդեռ գործաւորները առանի կը փախչին , կատալէ զանոնք յիհարարար և նոյնքան անխղճօրէն , որ զէմ կենան կառքերուն հոսանքին և արգիլէն անոնց զէպի Գանուր վազքը : Գործաւորները գործներուն կելլանի և իրենց աշխատանքներուն վարձքը կը կտարենի վախէն , և անգէտ մեքենական և բնագիտական օրէնքներու , թէեւ կը համակերպին և իրենց բոլոր ուժը ի գործ կը գնեն , բայց այդ անագին մեքենական ուժը՝ արհամարհելով մարդկային ֆիզիքական խեղճութեամբ՝ իր զօհերը կը տանի գործաւորներէ մին—հազիւ 22—25 տարեկան հայաստանցի երիտասարդ—ամբողջովին կառքին տակ մնալով վայրկեանապէս կը մեռնի : մէկ ուրիշին թեւր կերթայ , իսկ շատեր Գանուր նետուելով կազատվու ու ահա այսպէս երկու երիտասարդ անձինք զոհ տալով կատարուեն զէպի Գանուր վազքը կարգիլուի . բան մը որ կարելի էր երբէք տեղի չունենար և կամ առանց մարդկային

ըրած են գէպի ցածը, օրինակե-
լով իրենց այս մասին տիպար
դարցած ուսուցիչները: Այս մար-
դիկը (ուսուցիչները) բունի կեր-
պով այս տեղ պահելուն ալ գարը
անցաւ, և եթէ ասկից վերջ զա-
նոնք կրկին հոս պահելու ջանք
լինի՝ աստի ալ լրբութեան ծայրը
եղած պիտի ըլլայ: Պէտք է ու-
սոնց անցագրերը ձեռքերնին
տալ, և պէտք է ժամ առաջ տե-
ղը ուրիշները բերել: Ի՞նչ կընէ
հոգաբարձութիւնը. արգելք կը
խորհի այս բաներուն վրայ:

Կիմանանք որ հոգաբարձու-
թիւնը հրաժարական պիտի տայ.
Եթէ աւանց հին հաշիւները
կարգադրելու, առանց ուսուցիչ-
ներուն անցեալ շրջանի պա-
հանջները վճարելու ատանկ բան
մը ընէ հոգաբարձութիւնը՝ վա-
ստութիւններու մեծն է որ ըրած
պիտի ըլլայ: Գործ մը ազտու-
անելու պըճնքուելէ վերջ փախ-
չելը անշուշտ վատութիւն մըն է
զոր չեմ յուսար թէ գործելու
յիմարութիւնը ընէ հոգաբար-
ձութիւնը:

Հ.

Եաշ, 27 Յունիս

Շարժումի էջերուն մէջ քանիցս
անգամ գրուեցաւ Ռուսմանիոյ հայոց
մասին, որ անգամ մը ակնարկելին
Հայաստանի սովամահ աղբարկիչնե-
րուն վրայ դարձնելով, սեռան, անոնց
քաշած թշուառութիւնները
և ականջները բանալով լսեն անոնց
«օգնութիւն» պոռթկոցը ձայնը. ու
իրենք ալ օգնութեան հասնին, եղ-
բայրական սուրբ պարտականութիւն
մը կատարելու: Բայց գրուածները
Ռուսմանիոյ հայոց ո՛չ մի ազդեցու-
թիւն չըրին:

Ռուսմանիոյ հայը կըսէ, ես հայ
եմ և ազգասէր, սակայն հարցուր
անոր «սիրելի Ռուսմանացի հայ եղ-
բայր, մինչև ցարք քու հայու-
թիւնդ եւ ազգասիրութիւնդ ցուց-
նելու համար ի՞նչ ըրիր, չէ որ հի-
մա Հայաստանի քու եղբայրներդ

սովամահ, օգնութիւն կը խնդրեն
քեզմէ, ու դուն չես օգներ անոր.
ուրեմն ա՛յս է քու ազգասիրութիւնդ
ու հայութիւնդ. չէ՛, եղբայր չէ՛,
եթէ դու հայ, կատարեալ ազգասէր
ես, ուրեմն զիտցիր որ հայութիւնը
այդ չի պահանջեր, որ քու եղբորդ
օգնութեան ձեռք չերկնցունես երբ
նա ծովը ինկած ալիքներուն մէջէն
քեզ կը ձայնէն:

Մի քանի խօսք ալ Ռուսմանիոյ
հայոց հարուստ աղաներուն: Ի՞նչ
կընեն մեր այն հարուստ աղաները,
որ կարող են Հայաստանի մէջ մէկ
մէկ որբանոց բանալով սասնական
քսանական հայ մանկաներ սնու-
ցանել: Ինչո՞ւ մեր աղաները Ռու-
սաստանի հարուստ ազգայնոց բարի
օրինակին չեն հետևիր: Կիմանամ
որ Պարսկաի մեծանուն հարուստ
ազգայիններէն մէկը, Ռուսմանիոյ
ծերակոյտի խորհրդարանին անգամ
ընտրուելով 20 000 ֆրանք նուիրած
է, որ քսան հատ Ռուսմէն աղջկանց
օժիտ լինի. բարի գործ, սակայն
ներկի լինի ինչ հոս հարցնելու թէ,
հա՞ճած է Տիար նուիրատուն քսան
հազար ալ ազգային Պատրիարքա-
րան խրկել, քսան հատիկ որբուհի-
ներ որբանոցի մը մէջ խնամուելու:
Օտարը զթաղով մեր թշուառ մանուկ-
ներուն վրայ օգնութեան կը հաս-
նին, մերիները ինչո՞ւ անարբեր
մնան:

Մենք կսպասենք որ Ռուսման-
ցիները վերջապէս շարժին եւ մաս-
նաւոր իրենց հաշուով որբանոցներ
բանան:

Ա. Ե. Ն.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կրթարանի վիճակա-
ցոյցներու բաշխման եւ մանկապար-
տէզի հանդէսը տեղի պիտի ունենայ
վաղը, կիրակի, 4 Յունիս, ժամը
Ձիւն, Անկէլ Սլաւօֆի սրահը:

Մասնաւոր հրաւիրագիր չընդու-
նողներէն կը խնդրուի իբր այն
նկատել ներկայ յայտարարութիւնը:

Հինգագիր-Տնօրէն

Կրօն Միջաշէն

Վառնա, 3 Յունիս 1899

—)(—

զոհի մը ամենայն զիւրութեամբ առ-
ջեւը առնուլ, եթէ այդ գործին
յանձնառուները կանխազգուշական
միջոցներ ձեռք առած ըլլային.
բայց ասիկա անոնց հաշիւին չգար.
զի ծախքի գուռ կը բանայ իրենց:
Ասոնք շատ աղէկ գիտեն որ այսպի-
սի խնայողական միջոցներով շի-
նուած գործերու մէջ շատ մարդիկ
զոհ կրնան երթալ, բայց ի՞նչ փոյթ
մէկ, երկու, տասը, քսան շուն
(հարուստները չուն կը համարեն աղ-
քատ գործաւորները) զոհուելէն, կը
բաւէ որ շինուած գործը իրենց ա-
ժանի նստի:

Մենք ամէն պատեհ առիթներով
գոչած ենք եւ դարձեալ կը գոչենք
որ, այսպիսի գործերու մէջ կատա-
վարութիւնները պէտք են իրենց
մասնագէտ պաշտօնականներու միջոցա-
պահանջին եւ խստիւ պահանջին
յանձնառուներէն, որ անոնք ամէն
հաւանական վտանգներու առջեւը
առնելու համար հարկ եղած ծախքն
ընեն եւ կանխապատրաստութիւն-
ները տեսնան. եւ այս մասին յան-
ցաւորները պատժելու մէջ անողք
ըլլան, որպէս զի օրինակը ազդէ ու-

րիշներու վրայ ալ (՞) ու կաւելցնենք
թէ կատաւարութիւնը գէպի այս
ուղին առաջնորդողը պէտք է ըլլայ
խելահաս եւ պահանջող հասարակու-
թիւնը. զի առանց խելահաս եւ պա-
հանջող հասարակութեան մը, ակնա-
հանգիստ չի կրնար լինիլ:

(՞) Որքան որ կը հաւատամ, թէ
կատաւարութիւններու այսօրինակ
ընթացքը կրնայ մասամբ առջեւը
առնել սոյն օրինակ անեղ աղէտնե-
րու, բայց նոյնքան խստապահանջ
կրնամ ըլլալ: Դժբեր որ տիրող օ-
րէնքներու շնորհիւ բոլոր ուժը
գրամին ձեռքն անցած է եւ այդ
ուժին պէտքը հետզհետէ ալ աւելի
զգալի գարցած է, եւ մասնաւոր
քանի որ պահ (գրամը) օրինաւոր
կերպով ձեռք անցնելը օրէ օր ալ
անկարելի դարցած է այլեւս, կարելի
չէ վտանգիլ ոչ մէկ մարդու, ոչ մէկ
պաշտօնէի բարոյականին վրայ. հե-
տեւարար այս եւ այս կարգի ամէն
սեւակ աղէտներու ու զժքազո-
թիւններու առջեւը հիմնապէս կրնայ
առնուիլ միմիայն ընկերվարական
ընկերութեան մը հաստատումովը:

Նալյալիսիոյ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վանի գաւառապետութիւննե-
րու առաջին տնտեսու. և ժողո-
վարը հովուելու համար Պատ-
րիարքարանէն զրկուեցան ներ-
սէս եպիսկոպոս և ուրիշ վարդա-
պետ մը, կաթողիկոսներն ալ իրենց
կողմէն վերջերս վարդապետ մը
կը չորս մայրապետներ զրկեր են
հոն օժանդակելու Անտոն վար-
դապետին, որպէս զի աւելի մեծ
ուժով առաջ տանի իր մարդոր-
տութիւնը:

— Վանի վերաքննիչ ատենաւ
անցեալ տարի ձանձիկ գիւղի մէջ՝
հաճի Արամի խնդրով բանտար-
կուածներէն 7 հոգի 15 ական և
մէկը 7 տարի բանտարկութեան
զատարարտեր է. իսկ մնացեալ-
ներն ազատ ձգուեր են:

— Վեհ. Կաթողիկոսը էջմիած-
նոյ Մայր Տաճարի դրան մօտ
Կաթողիկոսաց յատուկ դամբա-
րան մը պատրաստեր է, ուր ի-
րեն գերեզմանն ալ որոշեր է,
ասկէ զատ էջմիածնայ տաճարին
հրապարակի վրայ Միւսուօրհ-
նութեան յատուկ տեղ մը պատ-
րասել սուեր է, որպէս զի
ուխաւորաց բաղմութիւնը չը
զրկուի նոյն հոգեւոր հանդէսին
մասնակցութենէն:

Ասոնք լաւ. բայց որչափ զի-
տենք վեհ. Կաթողիկոսը էջմի-
ածնայ միաբանութիւնը բարոյա-
պէս վերաշինելու շատ հոգ չի
տանիր, ինչ որ աւելի կարեւոր
է:

— Կեսարիոյ Ս. Կարապետի
որբանոցին մէջ պատրաստուած
ներաւհիւս մետաքսեայ գորգ մը,
որուն մէջտեղը նկարուած է Ս.
Կարապետին վանքը, Կեսարիոյ
Առաջնորդին միջոցաւ նուիրուեր
է Մայր Աթոռին: Թիֆլիզի գոր-
գի վաճառականները մինչև 50
ոսկի գնահատեր են այդ գորգը:

րեղի և ունեւալ խելացի եւ պարսա-
ձանայ կառավարութիւն:

Կը յուսանք որ կատաւարութիւնը
ճշանակութիւն պիտի տայ այսպիսի
մասնի գէպերու ալ, եւ քննելով
սոնոց պատճառները արդարութիւնը
ի գործ պիտի զնէ յանցաւորներուն
վրայ, եւ դարձեալ կը յուսանք որ
այս նորանոր փորձերէն ու փորձա-
ներէն ալլեւս վերջնապէս համոզուած
կատաւարութիւնը պիտի պահանջէ
որ ասկէ ետքը յանձնառուները
խստիւ պարտաւոր ըլլան այս տեսակ
գործերու մէջ ունէ հաւանական վը-
տանք ու աղէտ չպատահելու համար
արհեստին ու գիտութեան ցոյց
տուած կամ մասակարարած ամէն
միջոցներն ի գործ դնելու եւ այս
բաներուն խստիւ ու անպակաս պա-
հանջուելը լաւ մը հասկցնել տալէ
վերջ միայն թոյլ տալ որ մրցման
կամ նուազուրդի մասնակից ըլլայ
մէկը, Բայց ըստ մեզ յանձնառու-
թեան կամ կապալի գրութիւնը
միշտ վնասակար է ազգատ դաս-
կարգին եւ գործաւորներուն: Այն
կատաւարութիւնը կամ ընկերու-
թիւնը, որ կուզէ գործ մը շինել.

որ իբրեւ հայ որբերու ձեռագործ
աւելի մեծ արժէք ունի:

— Երզնկայի Առաջնորդը ինչ-
պէս կրօն. և Քաղ. Ժողովոյ ան-
դամները տեղւոյն ազգայնոց կա-
րօտութիւնը յայտնած և նպաստ
խնդրած են Պատրիարքարանէն:

— Այս տարի Պօլսոյ բժշկական
վարժարանէն երեք հատ հայեր
յաջողութեամբ քննութիւն ան-
ցընելով վկայական ստացեր են:

— Յունիս 23 «Սուրհանդակի»
մէջ կը կարդանք. «Քաղ. Ժողո-
վոյ անցեալ նստին մէջ պատ-
րաստուած պաշտօնագրերը՝ այսօր
Խառն Ժողովոյ մէջ վերջնական
ընթացումէ մը յետոյ, բոլոր
անդամոց կողմէ ստորագրուելով
պիտի մատուցուին Կայս. կառա-
վարութեան»:

Բայց ի՞նչ պաշտօնագրեր են
ասոնք. կրցողը թող հասկնայ.
չարափոխուած Սահմանագրու-
թիւնը չըլլայ...:

— Մուշի նախորդ Առաջն. Տե-
ղապահ Վարդան վարդապետ հե-
ռագրով խնդրած է Պատրիար-
քարանէ որ իր հրաժարականը
ընդունուի և ինքը հեռանայ
Մուշէն. պատճառը կարգալ մեր
այսօրուան Մուշի թղթակցու-
թեան մէջ:

— Նախկին Վենետիկի Միսի-
թարեան միաբան Հ. Պօղոս Վ.
Գաֆթան, որոշած ըլլալով իր
տրամադրութեան տակ գտնուած
գումարով վարժարան մը բանալ.
20 որբ տղայներ ուղած է Պատ-
րիարքէն:

— Զմիւռնիոյ Որբասիրաց ըն-
կերութիւնը որ 46 որբեր կը
խնամէ, իր 14 ամսուան տեղե-
կագիրը հրատարակեր է. այդ
ժամանակամիջոցին մէջ ընկե-
րութեան մուտքը եղեր է 97,580
դրուշ և ուրկէ բոլոր ծախսերը
հոգացուելէ վերջը 10,364 դրուշ
պատրաստ գրամ մնացեր է:

— Ի նպաստ Ազգ. հիւանդա-

աւելի լաւ կընէ թէ իրեն համար եւ
թէ ժողովրդին, եթէ զայն կապալի
չտայ ու ինք իր հաշուով շինէ.
վասն զի կապալները որ արդէն
չատ հաշուուած գումով մը ստանձնած
են գործը՝ այդ գործին մէջէն մեծ
չափ մը հանելու համար միշտ պիտի
աշխատին թէ քիչ վճարել գործաւոր-
ներուն եւ թէ շարաշար աշխատցնել,
եւ գործաւորները հաւանական վը-
տանգներէ զերծ պահելու համար
հարկ եղած ծախքերը չընել. ասոնց-
մէ զատ անոնք գործը աժան հանե-
լու համար աւրուած, կտրած ու փսած
նիւթեր ալ կը գործածեն. եւ շատ
տեսնուած է որ կապալներու ձեռ-
քով շինուած կամուրջներ կամ
նմանօրինակ շէնքեր որ գեռ տարի
մը չկազմ փլած են անհուն վնասներ
պատճառելով:

Գառնիկ Գ. Մարտիանան

Բուսշուք, 12 Յունիս

—)(—

նոցի հրապարակ հանուած սի- կառի թուղթը աւելի շահաբեր վիճակի մէջ դնելու և ընդհան- րացնելու համար այդ թուղթը մինչեւ հիմակ շահագործող Մ. Ծիրինեան առաջարկեր է Հոգա- բարձութեան՝ գործը ամբողջո- վին իրենց յանձնել : Հոգաբար- ձութիւնը սիրով ընդունած է այդ առաջարկութիւնը և մտա- դիր է հիւանդանոցի մէջ և որ- բանոցի տղայոց ձեռքով պատ- րաստել թուղթը վարձատրելով միանգամայն տղայոց աշխատու- թիւնն ալ :

— Պատրիարքարանի քարտու- զար ներսէս Վ. Դանիէլեան սկը- սեր է մանրամասն վիճակագրու- թիւն մը պատրաստել . բոլոր վիճակներու և անոնց մէջ գըտ- նուած վանքերու մասին :

Շատ անգամ այսպիսի աշխա- տութիւններու մասին լուրեր առած ենք բայց չէ յաջողուած , երանի թէ այս անգամ լուրջ և ամբողջ վիճակագիր մը պատ- րաստուեր :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աթէնքէն կը հերքեն այն լուրը թէ Ռուսաստանը միտք ունի հայ գաղթականները կրէտէ վերաբը- նակեցնել : Պօլի. Կօրէսի թղթա- կիցը կը հաղորդէ որ ոչ կրէտէի բարձրագոյն գոմիսէրը և ոչ ալ Ռուսաց դեսպանը այդ մասին տեղեկութիւն մը ունին :

— Ռուսական թերթերուն նա- յելով Եմէնի ապստամբութիւնը հետզհետէ սպառնալի կը դառ- նայ : Սով ալ կայ որ տարածուած է Հիճազի վիճակի մէջ . կա- ռավարութեան ձեռք առած մի- ջոցները բոլորովին անզօր են սովին սարսափելի հետեւանք- ներուն առաջքն առնել :

Արաբները ճանճերու պէս կը մեռնին : Եմէնի ապստամբած Բէտուիններուն միացեր են նաև մերձակայ աւազակ բնակիչները : Տեղական բերդապահ զօրքերը անզօր են ճնշելու ապստամբու- թիւնը . կառավարութիւնը մտա- դիր է զօրքերը շատցնել :

— Յունիս 20ին Սէլամլըքէն վերջ , երբ Սուլթանը բաց կառ- քով , որ ինք կը վարէր , Երլտը կը վերադառնար , պալատին դրան քով հասնելուն պէս , զօր- քերուն շարքէն զինուոր մը ա- ռաջ կանցնի հրացանը ձեռքը և կառքի առջեւ կը կարէ աղա- զակելով «երկար կեանք Սուլ- թանին» և աղբրագիր մը կը նետէ կառքին մէջ :

Սուլթանը չափազանց ահաբե- կած , կառքին ետեւը կիյնայ և ճամբան կը շարունակէ : Իսկոյն թիկնապահները զինուորը զինա- թափ կրնեն և քաշելով կը տա- նին զօրանոց . այս դէպքը մեծ տպաւորութիւն գործած է բազ- մաթիւ ահանատներուն վրայ :

— Ձը նայած սարսափելի վատ եղանակին Յունիսի 20ին Վիէն- նայի մէջ ընկերվարականները ահագին ցոյց մը ըրած են քա- ղաքային ընտրողական օրէնքին դէմ , որ անցեալները քուէսը- կուեցաւ , նոյնպէս սօք. Լիւզէրի և իր համակրողներու : Յոյցը տեւած է երեք օր . վերջին օրուանը աւելի ազդու եղած է : 10,000 մարդէ կազմուած թափօր մը , բաղկացած ընկերվարական ուսանողներէ , վաճառատան ծա- ռայողներէ , ինչպէս և օրիորդ- ներէ և տեսակ տեսակ բանուր- ներէ գեղեցիկ կարգապահու- թեամբ՝ Բինկ քաղաքամասը հա- սաւ ժամ մը կեցաւ աղաղակելով «անկցի Լիւզէրը — «անկցին ընտրողական իրաւունքները յա- փըշտակողները» :

— Ֆիլիպեան կղզիներու խըն- դիրը դեռ կը շարունակէ յուզել Մ. Նահանգաց հանրային կար- ծիքը . «Թայմզ»-ի Նիւ-Եօրքի թղթակցին տուած տեղեկու- թիւններուն նայելով , կերեւայ թէ զօրավար Օտիսը համոզուած է որ առանց նոր օգնութեան անկարելի է կղզիներուն խնդի- րը կարգադրել : Լուր կը պտտի թէ զօրավար Օտիս դեռ շատ կանուխէն յայտնած է որ զօրքը քիչ է . բայց կառավարութիւնը ուշք չէ դարձուցած անոր հե- ռագիրներուն վրայ և կեղծած է , որովհետեւ անոնք կը պարզէին գործերուն իսկական վիճակը : Կրտսն որ Մանիլայի գրաքննիչը բոլորովին թայլ չէ տուած տեղա- կան ամբիկեան իշխանութեանց թերութիւններ պարունակող հե- ռագիրները անցնին : Կը հաս- տատուի որ այդպէս եղած է Մ. Նահանգներու նախագահին կար- ղադրութիւնովը :

Էւր կայ որ զօրավար Օտիսին օգնութիւն պէտք է հասցնեն հոկտեմբեր 1ին Մանիլա :

Ուրեմն Ֆիլիպեան կղզիները նորէն աւելի սոսկալի և կատաղի տեսարաններու հանդիսավայր պիտի դառնան , քանի որ ամե- րիկացիները կուզեն իրենց իշ- խանութիւնը հոն հաստատել . իսկ Ֆիլիպինցիներն ալ բուռն և ե- ռանդուն կերպով կը բողոքեն :

— Յունիս 24ին Ալեքսանդրիոյ մէջ ժանտախտի 7 դէպք տեղի ունեցած է . երկու հոգի մեռած է :

— Ռուսիոյ գահաժառանգ Գէօրգի յունիս 29ին վախճանած է :

— Պուլկարական Սօպրանիէին մէջ Մակեդոնական ինդրոյն հա- մար հարցապնդում եղած է : Պ. Կրէքօֆ նախարարապետ պատաս- խանած է որ կառավարութիւնը չի կրնար զէնքի դիմել յօգուտ Մակեդոնիոյ : Պուլկարի միակ անկարող է իրագործել տալ Պեր- լինի Վեհաժողովին մէջ Մակո- կեդոնիոյ խոստացուած բարենո- րոգումները , առանց մեծ պե- տութիւններուն աջակցութեանը :

Եւ կաւելցնէ . շուտով Թուրքիա պիտի համոզուի որ պուլկար կա- ռավարութիւնը մատ չունի Մա- կեդոնական խոռոչութիւններուն մէջ :

— Յունիս 21ին , ժամը 5ուկէ- սին Սերպիական նախկին թագա-ւոր Միլան բաց կառքով անցած միջոցին յարձակման կենթար- կուի : 20 տարեկանի մօտ երի- տասարդ մը չորս անգամ ատրճա- նակ կը պարպէ Միլանին վրայ . Միլան չի ֆրասուիր , բայց իր օգ- նական Լուրիչ թեւէն կը վիրա-ւորուի :

Գէպքէն քիչ մը վերջը նոյն տեղէն կանցնի թագաւոր Ալէք- սանտր և համակրական ցոյցերու կարժանանայ :

Շատ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ տեղի ու- նեցած են : Մեծ մասամբ արմա- տա՛ան աղատականներէն նախ- կին նախարար Թուլանալիչ , Օ- դեկի խմբագիր Ժիվկովիչ , գըն- դապետ Վլատան :

Ձերբակալուած են և եկեղե- ցականներ , որոնց մէջ կը գըտ- նուի աւագերեց Միլիչը :

— Աւստրիական կայսրը և բարձրագոյն պաշտօնեաներ հե- ռագիրներ քաշած են Աղեք- սանտր թագաւորին :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԱՄԵՐԻԿԱ , Մ. Գալուստեան . — Ձեր զրկած հինգ տօլարը ստա- ցանք : Ի՞նչ հասցէ տոմս կըսէք , չենք հասկնար : Մի՞թէ առաջ ալ այդ մասին գրած էք : Գրքերը կուղարկենք :

ՃՈՒՐՃՈՎԱ , Յ. Մուշէղեան . — Ձեր զրկած 6 ֆրանգը ստացած ենք , և քարթ փօթով մըն ալ գրած : Կոպտանք անցեալ ար- ռան ամբողջը՝ որպէս զի ձեզի ընկալագիր չըկենք :

ՇԵՈՐՀԱԿԱԼԻՔ

Կորսին շնորհակալութիւնս կը յայտնեմ հրապարակաւ Տիրա Տօքթ. Վարդանեանին , որ ձրիպէս գար- մանեց Իրեք օր շարունակաբար ծնդարեութեան ցաւերով տառա- պող կինս իր արուեստին ճարտա- րութեամբ :

Պարսաւ Յակոբեան

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Item/Category and Price. Includes items like Վառնա 3 Յուլիս, ՊՈՒՂՏԱՅ, Արապա, ԱՐԲԱ, ՄԻՍԻՐ.

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՐԸ
Քաւառ-Քարիպաւն
Գրեց ԲԱԲԱ-ԳԱՍՊԱՐ :
Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ , իսկ արտասահմանի համար 60 սան- թիմ :
Ցանկացողները թող գրեն Շաւ- ժուլի խմբագրութեան :

« Բ Ա Ն Ա Ս Է Ր »

Հանդէս Հնախօսական , Պատմա- կան , Լեզուաբանական և Գննա- կան :
Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱ- ՅԵԱՆԻ .
Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար , իսկ մէկ գիրքը , 100 էջով , 6 ֆրանք :
Հասցէ՝
M. Basmadjian
112 , B-d. Rochechouart , 112
Paris

« Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք »

Ազգային շարթաթերթ , տարե- կան մէկուկէս տօլար , իսկ արտա- սահմանի համար 10 ֆրանք :
Հասցէն՝ Նոր. Հայրենիքի
628 Third Avenue
New York City
(U. S. Y.)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՏԱՐԺՈՒՄ»

Կը ապագրուին ամէն լեզուէ այցետոմս , հասցէտոմս , նամա- կագրուի , հարսանեկան հրաւի- րագիր , մահազգ , ինչպէս նաև պրօշիւններ :

Գիները յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդու- թեամբ և փութով կը կատար- ուին :
ՅԱՆՁՆՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԿ

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)
(Գին 1 Պրանգ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շաւժուլի խմբագրատունը , Ֆիլիպէ՝ Տ. Անտօն Կոչի մօտ , Ռուսչուք՝ Հայկ Մալախ- եանի սրճարանը :

ԿՈՒՉԻՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Գիմեցէ՛ք
Մ. Թիւթիւնեան և Ընկ. Ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն , Սօֆիա քաղաքի՝ Պուլկարական կա- ռավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմ- սակները :
Օտար երկիրներէ յանձնարարու- թիւններ ևս կընդունուին :

Отговорникъ : А. СУКЯСОВЪ